**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**
**ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/25 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ**
**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան**

**20 ապրիլի 2026թ.**

2026թ-ի ապրիլի 3-20-ը ՀՀ, ք. Երևան, Օրբելի 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում տեղի ունեցավ գիտական սարքերի և սարքավորումների ձեռքբերման **ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/25** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Մովսիսյան՝ | Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահի տեղակալ (հանձնաժողովի նախագահ); |
| Պ. Մանթաշյան՝ | Ա. Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտական խմբի ղեկավար (հանձնաժողովի անդամ); |
| Դ. Հայրապետյան՝ | Ա. Բ. Նալբանդյանի անվան Քիմիական ֆիզիկայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ (հանձնաժողովի անդամ): |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Մովսիսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Առաքելյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից և նիստին էլ մասնակցել են բոլոր երեք անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, որպիսի փաստով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մեսնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՄՈՒՏՔ № Ա-30140
20 04 2026

6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ-ի ապրիլի 3-ին, ՀՀ, ք. Երևան Օրբելի եղբայրների 22 հասցեում գտնվող Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված, տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հրապարակեց գնման հայտով սահմանված ձեռքբերվող գնման առարկա/ներ/ի գնման գինը/գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | Բարձր ճնշումային համասեռացուցիչ | 11,770,500.00 | 06.04.2026 14:00 | 14,125,000.00 |
| 2 | ՈւՁ միակցման սարքավորում | 5,608,223.00 | 06.04.2026 14:00 | 5,616,000.00 |
| 3 | Պոլյարիմետր և օպտիկական աշխատանքային հարթակ | 20,495,000.00 | 06.04.2026 14:00 | 24,600,000.00 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | ք. Երևան, Հր. Ներսիսյան փ., 6շ., 4բն. | +374 95 54 30 78 | pprimalab@gmail.com | 08256775 |
| 2 | Ա/Ձ Տիգրան Նալբանդյան | Հայաստան, Լոռի, Կուրթան 12Փ., Տ 10 | +374 44 73 72 87 | nalbandyantigran@internet.ru | 67094216 |
| 3 | ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ | ԵՐԵՎԱՆ, ՆՈՐ ՆՈՐՔ, Մոլդովական 60 0062, | +374 99 63 88 51 | vidtardan@gmail.com | 01091058 |
| 4 | «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | ք. Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ. 10շ. բն.58 | +374 43 38 06 10 | extra.mot2024@gmail.com | 01336677 |
| 5 | Ամազոն Իմպորտ ՍՊԸ | ք. Երևան, Ռ. Լեմկինի 14 | +374 94 28 88 34 | amazonimportllc@gmail.com | 08257786 |
| 6 | Ջեներալ Սիսթեմս ՍՊԸ | 2208, ՀՀ, Կոտայքի մարզ, Աբովյան, 3-րդ միկրոշրջան, 19/1 | +374 93 77 97 85 | genesys.arm@gmail.com | 03581056 |
| 7 | «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ | ՀՀ, 0038, Երևան, Աբելյան փող., 6/4 շենք, TGA Բիզնես Կենտրոն 3-րդ հարկ, 310 սենյակ | +(374) 77414108 | ardmoreconstruct@gmail.com | 08258677 |
| 8 | ՅՈՒԷՆ ՍՈՒՊՊՈՐՏ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան, 0065, Ջամբուլի փ. 33 | +374 41 19 90 13 | unsllcompany@gmail.com | 01297088 |
| 9 | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | ք. Երևան , Ազատության 26/8 | +374 11 87 87 17 | lawyer@c-e.am | 01210095 |

2026 թվականի ապրիլի 6-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ՝ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

«Տիգրան Նալբանդյան Ա/Ձ-ի կողմից 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում է պահանջվող ապրանքի ապրանքային նշանի, մակնիշի և արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվությունը,

«ՅՈՒԷՆ ՍՈՒՊՊՈՐՏ» ՍՊԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝

- Առաջարկվող PFA52507 մոդելի աշխատանքային բարձրությունը կազմում է 800 մմ (31.5"), մինչդեռ տեխնիկական բնութագրում նշված է 35.80" (910 ±5 մմ),
- Առաջարկվող PSY222 մոդելը չի ներառում թեք ձգելու հնարավորություն, մինչդեռ տեխնիկական պահանջով նշված է 12° թեքությամբ ձգման հնարավորություն,
- PSY320S մոդելը ներկայացված է որպես լրացուցիչ բաղադրիչ,

- Առաջարկվող PSY312 մոդելի չափերը որոշ չափով տարբերվում են տեխնիկական բնութագրում նշված չափերից,
- Օպտիկական տախտակի ամրակների համար նշված է 300 մմ երկարություն, սակայն առաջարկվել է 600 մմ երկարությամբ PSY361 մոդելը,
- Պահանջված էր երկուական հավաքածու, մինչդեռ առաջարկում նշված է 1 հավաքածու,
- Առաջարկվող P350/M մոդելը, ըստ ներկայացված տվյալների, չի համընկնում պահանջներին,
- PTA280 մոդելի քանակությունը տեխնիկական բնութագրում նշված է 1 հատ, մինչդեռ առաջարկում նշված է 2 հատ:
- LX30/M մոդելի համար տեխնիկական բնութագրում նշված է 3 հատ, սակայն առաջարկում քանակը նշված չէ:
- LNR502/M մոդելը օպտիկական ծածկագրում չունի, մինչդեռ այն պահանջվում է տեխնիկական բնութագրով:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026 թվականի ապրիլի 6-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | 14,125,000.00 | 11,770,500.00 | 20% | 14,124,600.00 | 6,662,500.00 | 20% | 7,995,000.00 | X |
| | Ա/Ձ Տիգրան Նալբանդյան | | 14,117,223.00 | 0% | 14,117,223.00 | 9,527,000.00 | 0% | 9,527,000.00 | |
| | ԱՐՍԵՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ | | 24,500,000.00 | 20% | 29,400,000.00 | 9,882,295.00 | 20% | 11,858,754.00 | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | | 13,437,500.00 | 20% | 16,125,000.00 | 13,437,500.00 | 20% | 16,125,000.00 | Մերժված |
| | Ամազոն Իմպորտ ՍՊԸ | | 100,000,000.00 | 20% | 120,000,000.00 | 100,000,000.00 | 20% | 120,000,000.00 | Մերժված |
| | Ջեներալ Սիսթեմս ՍՊԸ | | 777,777,777.77 | 20% | 933,333,333.32 | 777,777,777.77 | 20% | 933,333,333.32 | Մերժված |
| 2 | Ա/Ձ Տիգրան Նալբանդյան | 5,616,000.00 | 5,608,223.00 | 0% | 5,608,223.00 | 2,400,000.00 | 0% | 2,400,000.00 | X |
| | «Արդմոր Կոնստրակտ» ՍՊԸ | | 5,616,000.00 | 20% | 6,739,200.00 | 2,899,000.00 | 20% | 3,478,800.00 | |
| | ԱՐՍՇԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ | | 24,500,000.00 | 20% | 29,400,000.00 | 4,300,000.00 | 20% | 5,160,000.00 | |
| | «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | | 6,346,666.67 | 20% | 7,616,000.00 | 6,346,666.67 | 20% | 7,616,000.00 | Մերժված |
| | Ամազոն Իմպորտ ՍՊԸ | | 100,000,000.00 | 20% | 120,000,000.00 | 100,000,000.00 | 20% | 120,000,000.00 | Մերժված |
| | Ջեներալ Սիսթեմս ՍՊԸ | | 777,777,777.77 | 20% | 933,333,333.32 | 777,777,777.77 | 20% | 933,333,333.32 | Մերժված |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ ՍՊԸ | 24,600,000.00 | 24,600,000.00 | 24,600,000.00 | 20% | 29,520,000.00 | 14,200,000.00 | 20% | X |
| | Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ | | 24,600,000.00 | 20,497,500.00 | 20% | 24,597,000.00 | 14,850,000.00 | 20% | |
| | «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ | | 24,600,000.00 | 22,166,666.67 | 20% | 26,600,000.00 | 15,290,000.00 | 20% | |
| | ԱՐՍԻՆ 91 ԳՐՈՒՊ ՍՊԸ | | 24,600,000.00 | 24,500,000.00 | 20% | 29,400,000.00 | 16,000,000.00 | 20% | |
| | «Պրիմա Լաբ» ՍՊԸ | | 24,600,000.00 | 20,495,000.00 | 20% | 24,594,000.00 | 16,500,000.00 | 20% | |
| | Ա/Ձ Տիգրան Նալբանդյան | | 24,600,000.00 | 24,592,223.00 | 0% | 24,592,223.00 | 24,592,223.00 | 0% | |
| | Ամազոն Իմպորտ ՍՊԸ | | 24,600,000.00 | 100,000,000.00 | 20% | 120,000,000.00 | 100,000,000.00 | 20% | Մերժված |
| | Ջեներալ Սիսթեմս ՍՊԸ | | 24,600,000.00 | 777,777,777.77 | 20% | 933,333,333.32 | 777,777,777.77 | 20% | Մերժված |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026 թվականի ապրիլի 9-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված

անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ , դեմ՝ 0:

2026 թվականի ապրիլի 13-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակցի կողմից սահմանված ժամկետում և կարգով ներկայացվել են արձանագրված անհամապատասխանությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026 թվականի ապրիլի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ներկայացված տեղեկատվությունը ընդունել ի գիտություն:

2. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Պրիմա Լաք» ՍՊԸ | բավարար |
| 2 | Ա/Ձ Տիգրան Նալբանդյան | բավարար |
| 3 | ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված Աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ա. Մովսիսյան __________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Պ. Մանթաշյան __________

Դ. Հայրապետյան __________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան __________